

ՀԵՐՔՈՒՄ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգևոր Խորհուրդը ընդ նախագահութեան Վեհափառ Հայրապետի 13 Նոյեմբերի նիստում ծանօթանալով և քննարկելով «ԱԶԳ» թերթում 4 Նոյեմբերի թւում լոյս տեսած պրն. Երուանդ Ազատեանի «Նոր խօսք» յօդուածը, հաստատեց, որ յօդուածի անտեղեակ հեղինակը պարզապէս զոհ է գնացել անճիշտ ու անարգական տուեալների, որոնք վերագրւում են Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Մայր Աթոռիս Գերագոյն Հոգևոր Խորհուրդի անդամներին, Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանին և Հայաստանի ու Միացեալ Նահանգաց մեր եկեղեցիների հոգևորականութեան:

Իսկ ինչ վերաբերում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, վերջին երեք տարիների բարօք յարաբերութիւններում, յօդուածում ցաւօք արտայայտւում է ո՛չ թէ միասնութեան, համերաշխութեան և գործակցութեան ոգին, այլ ուղիղ ընդհակառակը: Գերագոյն Հոգևոր Խորհուրդս գտնում է, որ վերստին արծարծել հարցեր որոնք յառաջացած էին մեր եկեղեցւոյ ծոցում սովետական իշխանութեանց շրջանում, այժմ բոլորովին անտեղի են և վնասաբեր:

Մեր այս դժուար օրերին, երբ մեր ողջ ժողովուրդը մահու կենաց պայքար է մղում յանուն իր ազատ գոյատևման, երբ մեր Հանրապետութեան նախագահի հրամանով ստեղծուել է Համահայկական Հիմնադրամի կազմակերպութիւնը, որին հրաւիրուել են մասնակցել Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը, Հայ Առաքելական Եկեղեցու ծոցում և նուիրապետական Աթոռների ու թեմերի միջև, անհրաժեշտ է ամրապնդել միասնական գործընթաց և համերաշխ ու շինարար աշխատակցութիւն: Այս է պահանջում մեզանից թէ մեր Մայր Եկեղեցու կոչումը, թէ մեր մարտնչող Մայր Հայրենիքի շահը, որ վեր է ամէն բանից:

Մօտ օրերս դիւանս պիտի հրապարակի ճշգրիտ տուեալներ վերջին երեք տարիների ընթացքում՝ Մայր Աթոռիս և մեր ներքին թեմերի ծաւալած գործունէութեան մասին՝ եկեղեցաշինական, կրօնական քարոզչութեան, սուրբ գրական գրականութեան հրատարակման ու տարածման և աղէտեալներին և Արցախի բնակչութեան դրամական մեծագումար օգնութիւններ բաշխելու և այլ հոգևոր ու հայրենանուէր իրագործումների մասին:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
16 Նոյեմբեր 1992